# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

# «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

## 1. Անհրաժեշտությունը

Սույն օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունումը պայմանավորված է՝ Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող ապրանքների (սև և գունավոր մետաղների և դրանցից արտադրվող արտադրատեսակների) արտաքին առևտուրը կանոնակարգելու, ինչպես նաև դեպի երրորդ երկրներ արտահանման սահմանափակման կարգավորումները «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի դրույթներով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:

## 2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Նախագծի նպատակն է՝ կանոնակարգել Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող ապրանքների (սև և գունավոր մետաղների և դրանցից արտադրվող արտադրատեսակների) արտաքին առևտուրը, ստեղծել առավել երկար արտադրական շղթաներ, խթանել սև և գունավոր մետաղների վերամշակման խորացումը տեղում՝ բարենպաստ պայմաններ ստեղծել արտերկրից ներմուծումը կրճատելու և առավել բարձր ավելացված արժեքով տեղական ապրանքների արտադրելու և արտահանելու համար:

Նպատակ ունենալով խթանելու (հումքի փոխարեն) առավել բարձր ավելացված արժեք ունեցող ապրանքների արտադրությունն ու արտահանումը՝ ՀՀ

կառավարության մի շարք որոշումներով արգելվել է սև և գունավոր մետաղների ջարդոնի ու թափոնի արտահանումը, ինչը խթան է հանդիսացել տեղում սև և գունավոր մետաղների ջարդոնը վերամշակելու համար:

Հարկ է նշել, որ մետաղների արտահանման արգելքը կիրառելուց հետո (2020թ.-ից) զգալի աճել է մետաղից արտադրող տեղական արտադրության ծավալները, մասնավորապես՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով 2021 թվականին միայն պողպատի ձուլագլանվածքների արտադրության ծավալը կազմել է ավելի քան 115.2 հազ. տոննա, ինչը 2020 թվականի նկատմամբ աճել է 8.4 անգամ, իսկ 2022թ. այդ արտադրանքը կազմել է ավելի քան 119.6 հազ. տոննա, ինչը 2021թ.-ի նկատմամբ ավելի է 3.9 %-ով, իսկ պողպատե խողովակների, սնամեջ տրամատների և դրանց կցամասերի արտադրության ծավալները 2023թ. հինգ ամիսներին աճել է շուրջ 45%-ով, կազմելով 6.4 հազ. տ.:

Կառավարության ձեռնարկած միջոցների արդյունքում 2022-2023 թվականին կատարվել են ներդրումներ մետալուրգիական արդյունաբերության մեջ (այդ թվում՝ օտարերկրյա):

Մասնավորապես՝ ընդլայնվում է Չարենցավանի «Ձուլակենտրոն» ընկերության արտադրանքի տեսականին, ավելացվում են «Ասկե գրուպ» ընկերության հզորությունները, կառուցվում է «Տաշիր գրուպ» ընկերության կողմից նոր մետալուրգիական և լարերի, իսկ օգտագործելով այդ լարերը՝ նաև տրանսֆորմատորների արտդրույան գործարան: Իրանական ներդրողների կողմից նախաձեռնվել է Քարակերտում մետաղի ջարդոնից լարերի արտադրության ձեռնարկության ստեղծումը: Նշված ընկերությունները նախատեսում են հետագայում ավելի խորացնել մետաղի մշակումը՝ ստացվող ձուլվածքներից արտադրելով երկաթյա պրոֆիլներ, որոնք ներկայումս ամբողջությամբ ներմուծվում են (տեղի կունենա ներմուծման փոխարինում):

Ըստ մեր կանխատեսումների, վերը նշված ծրագրերով ընդհանուր ներդրումները կկազմեն մինչև 100 մլն դոլար, որի արդյունքում կստեղծվի 550-750

նոր աշխատատեղ, տեղի կունենա սև և գունավոր մետաղների տեղական ջարդոնի օգտագործման ծավալների աճ՝ 65-70%-ով, հասցնելով ջարդոնի սպառման տարեկան քանակը մինչև 250 հազար տոննայի:

Առաջարկվող կարգավորումները առավել արդյունավետ կդարձնեն մետաղների վերամշակման գործընթացը՝ խորացնելով այն պարզ ձուլակտորներից դեպի առավել բարձ ավելացված արժեք ունեցող արտադրատեսակների արտադրությունը և արտահանումը:

Միևնույն ժամանակ, կարգավորումները կփակեն այն սողանցքները, որոնցից օգտվում են որոշ անբարեխիղճ արտահանողներ՝ մետաղի ջարդոնի փոխարեն (քանի որ ջարդոնի արտահանումն արգելված է)՝ արտահանելով ստանդարտներին չհամապատասխանող ձուլվածքներ, որոնք, սակայն, արտերկրում վաճառվում են մետաղի ջարդոնի գնով:

Մասնավորապես, առաջարկվում է Նախագծով ներկայացված ապրանքների արտահանման գործընթացը նույնպես իրականացնել լիցենզիաների միջոցով և սահմանել պետական տուրք ԱՏԳ ԱԱ 7403 ծածկագրին դասվող համաձուլվածքների, 7601 (ալյումին չմշակված), 7603 (ալյումինի փոշիներ և թեփուկներ), 7206 (երկաթի և չլեգիրված պողպատի՝ ձուլակտորներով կամ այլ սկզբնական ձևերով), 7207 (երկաթից կամ չլեգիրված պողպատից կիսապատրաստուկներ), ԱՏԳ ԱԱ 7224 (լեգիրված ձուլակտորներով կամ կիսապատրաստուկներ լեգիրված պողպատից) ապրանքներն արտահանելու համար:

Համաձայն Աղյուսակ 1-ի՝ 2021-2023թթ. Հայաստանից արտահանված (Նախագծով առաջարկվող) ապրանքների քանակները, ընդհանուր առմամբ, կազմել են շուրջ 68 հազ.տ (համապատասխանաբար սև և գունավոր մետաղներից՝ 50.1 և 17.9 հազ.տ), այն դեպքում՝ երբ նույն ժամանակահատվածում Հայաստան է ներմուծվել նույնպիսի շուրջ 102 հազ տոննա ապրանք (համապատասխանաբար սև և գունավոր մետաղներից՝ 6.1 և 95.9 հազ.տ) (Աղյուսակ 2-Ա, 2-Բ):

Նախագծով առաջարկվող ապրանքների յուրաքանչյուր մեկ տոննայի դեպի երրորդ երկրներ արտահանելու լիցենզիաներ տրամադրելու համար պետական տուրքը հաշվարկվել է այն տրամաբանությամբ, որպեսզի ապահովվի մրցակցային գներ արտահանման և տեղում վերամշակման համար:

Արտահանման վերը նշված ծավալների պահպանման դեպքում պետբյուջեի կանխատեսվող մուտքերը (պետական տուրքի տեսքով) կարող են ավելանալ համապատասխանաբար շուրջ՝ 6.9 մլրդ դրամով (համապատասխանաբար սև և գունավոր մետաղներից՝ 5.0 և 1.9) (Աղյուսակ 3-Ա, 3-Բ), սակայն հաշվի առնելով, որ առաջարկվող կարգավորումների արդյունքում, ըստ մեր կանխատեսումների, կնվազի նշված ապրանքների արտահանումը 50-60%-ով, ուստի տվյալ ապրանքների արտահանման գործունեությունը լիցենզավորելու պարագայում պետական բյուջեի մուտքերը պետական տուրքի գանձման տեսքով փաստացի կարող են ավելանալ շուրջ 1.3-1.7 մլրդ դրամով:

Ներկայումս գունավոր և սև մետաղների բորսայական գները պահպանվում են համեմատաբար բարձր մակարդակի վրա (Աղյուսակ 5), ուստի՝ բիզնեսի համար նպատակահարմար է արտահանել այդ ապրանքներն արտաքին շուկա (անգամ վաճառելով այն ջարդոնի գնով):

Նախագծում նշված ապրանքները ծառայում են որպես հումք ու նյութեր վերջնական արտադրանք թողարկելու համար, որոնք Հայաստանում ունեն մեծ պահանջարկ և կիրառություն, մասնավորապես՝ մետաղյա խողովակներ, պրոֆիլներ, գլանվածք, ամրաններ, պղնձյա և ալյումինե էլեկտրական լարեր, մալուխներ և այլն: Նշված ապրանքներից 2021-2023թթ. ներմուծվել է Հայաստան շուրջ 407 հազ. տոննա (համապատասխանաբար սև և գունավոր մետաղներից՝ 378.4 և 29.2 հազ.տ) (Աղյուսակ 4-Ա, 4-Բ): Առաջարկվող նախագիծն ընդունելու պարագայում բարենպաստ պայմաններ կստեղծվեն վերը նշված քանակի 20%-ն արտադրել Հայաստանում՝ իրականացնելով ներմուծման փոխարինում, ստեղծելով

լրացուցիչ աշխատատեղեր,իսկ ավելի բարձր ավելացված արժեքով ապրանքներ արտադրելու շնորհիվ՝ ապահովելով բյուջեի լրացուցիչ մուտքեր:

Հարկ է նշել, որ ԱՏԳ ԱԱ 7224 ծածկագրին դասվող (լեգիրված պողպատ) ապրանքը Հայաստանի Հանրապետությունից չի արտահանվել, սակայն նպատակահարմար ենք գտնում կիրառել պետական տուրք նաև նշված ապրանքատեսակի համար, քանի որ վերջինիս նույնականացումը մաքսային մարմինների համար բավականին բարդ է (չկան սերտիֆիկացված լաբորատորիաներ), իսկ ոչ բարեխիղճ արտահանողների կողմից ԱՏԳ ԱԱ 7206 և 7207 չլեգիրացված պողպատը կարող են հայտարարագրվել որպես լեգիրացված (ԱՏԳ ԱԱ 7224) և արտահանվել առանց որևէ սահմանափակման:

Միևնույն ժամանակ, համաձայն «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու արդյունքում անհրաժեշտություն է առաջացել համապատասխանեցնել ազգային օրենսդրությունը պայմանագրի դրույթներին, մասնավորապես՝ ԵԱՏՄ անդամ պետությունների միջև ապրանքների անխոչընդոտ տեղափոխման պահանջին՝ Նախագծով վերապահում է սահմանվել ԵԱՏՄ երկրներ տեղափոխվող վերը նշված ապրանքների նկատմամբ:

Հաշվի առնելով, որ «Պետական տուրքի մասին» օրենքի 19.6-րդ հոդվածի 2-6-րդ մասերում ներառված ապրանքների համար նախատեսված պետական տուրքը վերադարձման ենթակա չէ՝ Նախագծով առաջարկվում է նույն պահանջը սահմանել նաև առաջարկվող (Նախագծի 1-ին հոդվածի 7-11 մասերով սահմանված) ապրանքների արտահանման համար, որի նպատակով առաջարկվում է Նախագծի 38-րդ հոդվածի վերջին պարբերությունում «2-6-րդ» թվերը փոխարինել «2-11-րդ» թվերով:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունելու կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների

անհրաժեշտություն չի առաջանում, իսկ պետական բյուջեում նախատեսվում է եկամուտների ավելացում:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումից հետո անհրաժեշտություն կառաջանա մշակել և հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ (կարգ), որը կկանոնակարգի՝ ապրանքների արտահանման համար լիցենզիաների տրամադրման գործընթացը:

ՀՀ Ազգային Ժողովի կողմից սույն Նախագծի ընդունման և այն ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ կառավարության որոշման նախագիծը (կարգը), կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը:

Սույն նախագծի ընդունումը հնարավորություն կտա խթանել Հայաստանի համար ռազմավարական համարվող սև և գունավոր մետաղների վերամշակման խորացումը՝ ինչը կնպաստի արտերկրից ներմուծման կրճատմանը, առավել բարձր ավելացված արժեքով տեղական ապրանքների արտադրության զարգացմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին 18.11.2021թ. N 1902-Լ որոշմամբ հաստատված պահանջներից և ապահովում է Հավելված 1-ի «ՀՀ էկոնոմիկայի նախարարություն» բաժնի 5.4-րդ և 5.5-րդ կետով սահմանված դրույթների շարունակականությունը, այն է՝ մի շարք ապրանքատեսակների մասով հայրենական արտադրողների համար առավել նպաստավոր պայմանների ապահովում և ներքին շուկայի պաշտպանության քաղաքականության մշակում:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունելու կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չի առաջանում:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումից հետո անհրաժեշտություն կառաջանա մշակել և հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ (կարգ), որը կկանոնակարգի՝ ապրանքների արտահանման համար լիցենզիաների տրամադրման գործընթացը:

ՀՀ Ազգային Ժողովի կողմից սույն Նախագծի ընդունման և այն ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ կառավարության որոշման նախագիծը (կարգը), համաձայն Նախագծի անցումային դրույթում ֆիքսված ժամկետի, կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը:

**3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը**

Կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի խթանմանն ուղղված քաղաքականության մշակում ու իրականացում:

**4. Կարգավորման նպատակը և բնույթը**

Արտադրական շղթաների երկարացում, առավել բարդ և բարձրարժեք արտադրանքի խթանում:

**Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք**

Նախագիծը մշակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից՝ հաշվի առնելով շահագրգիռ պետական մարմինների և գործարար համայնքի ներկայացուցիչների դիրքորոշումները:

## 5. Ակնկալվող արդյունքը

Սույն նախագծի ընդունումը հնարավորություն կտա խթանել Հայաստանի համար ռազմավարական համարվող սև և գունավոր մետաղների վերամշակման խորացումը՝ ինչը կնպաստի արտերկրից ներմուծման կրճատմանը, առավել բարձր ավելացված արժեքով տեղական ապրանքների արտադրության զարգացմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը:

## 6. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին 18.11.2021թ. N 1902-Լ որոշմամբ հաստատված պահանջներից և ապահովում է Հավելված 1-ի «ՀՀ էկոնոմիկայի նախարարություն» բաժնի 5.4-րդ և 5.5-րդ կետով սահմանված դրույթների շարունակականությունը, այն է՝ մի շարք ապրանքատեսակների մասով հայրենական արտադրողների համար առավել նպաստավոր պայմանների ապահովում և ներքին շուկայի պաշտպանության քաղաքականության մշակում:

## 7. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)

Աղյուսակ 1-Ա

**Տեղեկանք***
**2021-2023թթ. Հայաստանից արտահանված Նախագծում ներառված ապրանքների մասին (սև մետաղից)**

| Ապրանքի անվանումը | ԱՏԳ ԱԱ ծածկագիր | Քաշը /տոննա/ | Գումար /հազ.ԱՄՆ $/ | Քաշը /տոննա/ | Գումար /հազ.ԱՄՆ $/ | Քաշը /տոննա/ | Գումար /հազ.ԱՄՆ $/ | Երկիր |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2021 թ. | | 2022 թ. | | 2023 թ. հունվար-մայիս | | |
| Երկաթ եւ չլեգիրված պողպատ՝ ձուլակտորներով կամ այլ սկզբնական ձեւերով | **7206** | 5734.4 | 1867.6 | 6762 | 2429.8 | 0 | 0 | Վրաստան, Իրան |
| Կիսապատրաստուկներ երկաթից կամ չլեգիրված պողպատից | **7207** | 15049.8 | 8467.6 | 16302.1 | 9147.8 | 6312.8 | 2943 | Իրան, Վրաստան |
| Լեգիրված պողպատ ձուլակտորներով կամ կիսապատրաստուկներ | **7224** | 1.7 | 7.6 | 0 | 0 | 72.2 | 25.3 | Իրան, ՌԴ, Ղազախստան, Բելառուս |
| ***Ընդամենը՝*** | | **20785.9** | **10342.8** | **23064.1** | **11577.6** | **6312.8** | **2968.3** | |

Աղյուսակ 1-Բ

**Տեղեկանք***
**2021-2023թթ. Հայաստանից արտահանված Նախագծում ներառված ապրանքների մասին (գունավոր մետաղից)**

| Ապրանքի անվանումը | ԱՏԳ ԱԱ ծածկագիր | Քաշը /տոննա/ | Գումար /հազ.ԱՄՆ $/ | Քաշը /տոննա/ | Գումար /հազ.ԱՄՆ $/ | Քաշը /տոննա/ | Գումար /հազ.ԱՄՆ $/ | Երկիր |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2021 թ. | | 2022 թ. | | 2023 թ. հունվար-մայիս | | |
| Զտված պղինձ եւ չմշակված պղնձային և ցինկային համաձուլվածքներ | 7403 | 381.8 | 2573.0 | 2217.1 | 17081.8 | 1085.5 | 8080.1 | Հոնկանգ, Լիտվա, Չինաստան, ՌԴ |
| Ալյումին չմշակված՝ | 7601 | 6523.5 | 13954.5 | 6062 | 14164.3 | 1678.6 | 3768.8 | Կիպրոս, Վրաստան, Իրան, Ճապոնիա, Լիտվա |
| Ալյումինի փոշի և թեփուկ | 7603 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | |
| ***Ընդամենը՝*** | | **6905.3** | **16527.5** | **8279.1** | **31246.1** | **2764.1** | **11848.9** | |

Աղյուսակ 2-Ա

**Տեղեկանք***
**2021-2023թթ. Հայաստան ներմուծված Նախագծում ներառված ապրանքների մասին (սև մետաղից)**

| Ապրանքի անվանումը | ԱՏԳ ԱԱ ծածկագիր | Քաշը /տոննա/ | Գումար /հազ.ԱՄՆ $/ | Քաշը /տոննա/ | Գումար /հազ.ԱՄՆ $/ | Քաշը /տոննա/ | Գումար /հազ.ԱՄՆ $/ | Երկիր |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2021 թ. | | 2022 թ. | | 2023 թ. հունվար-մայիս | | |
| Երկաթ եւ չլեգիրված պողպատ՝ ձուլակտորներով կամ այլ սկզբնական ձեւերով | 7206 | 133.6 | 114.8 | 2429.9 | 167.6 | 24.0 | 29.3 | ՌԴ |
| Կիսապատրաստուկներ երկաթից կամ չլեգիրված պողպատից | 7207 | 2457.7 | 1600.4 | 1010.1 | 985.1 | 21.8 | 26.6 | Ուկրաինա, Իտալիա, ՌԴ, Իրան |
| Լեգիրված պողպատ ձուլակտորներով կամ կիսապատրաստուկներ | 7224 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | |
| ***Ընդամենը՝*** | | **2591.3** | **1715.2** | **3440** | **1152.7** | **45.8** | **55.9** | |

Աղյուսակ 2-Բ

**Տեղեկանք***
**2021-2023թթ. Հայաստան ներմուծված Նախագծում ներառված ապրանքների մասին (գունավոր մետաղից)**

| Ապրանքի անվանումը | ԱՏԳ ԱԱ ծածկագիր | Քաշը /տոննա/ | Գումար /հազ.ԱՄՆ $/ | Քաշը /տոննա/ | Գումար /հազ.ԱՄՆ $/ | Քաշը /տոննա/ | Գումար /հազ.ԱՄՆ $/ | Երկիր |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2021 թ. | | 2022 թ. | | 2023 թ. հունվար-մայիս | | |
| Ձտված պղինձ եւ չմշակված պղնձային և ցինկային համաձուլվածքներ | **7403** | 6.8 | 105 | 17081.8 | 138.2 | 8.1 | 138.2 | Իտալիա, ՌԴ |
| Ալյումին չմշակված՝ | **7601** | 31266.3 | 73043.5 | 34834.7 | 99173.9 | 11710.5 | 27616.2 | ՌԴ |
| Ալյումինի փոշի և թեփուկ | **7603** | 258.3 | 857.5 | 608.5 | 2411.9 | 167.5 | 452.9 | Իրան, ՌԴ, ԱՄՆ |
| ***Ընդամենը՝*** | | **31531.4** | **73148.5** | **52525** | **101724.0** | **11886.1** | **28207.3** | |

Աղյուսակ 3-Ա

**Տեղեկանք**
**2021-2023թթ. Հայաստանից արտահանված Նախագծում ներառված ապրանքների պետական տուրքի ենթադրյալ չափի մասին (սև մետաղից)**

| Ապրանքի անվանումը | ԱՏԳ ԱԱ ծածկագիր | Չափը տուրքի առակության պարագայում /մլն.դրամ/ | Չափը տուրքի առակության պարագայում /մլն.դրամ/ | Չափը տուրքի առակության պարագայում /մլն.դրամ/ |
|---|---|---|---|---|
| | | 2021 թ. | 2022 թ. | 2023 թ. հունվար-մայիս |
| Երկաթ եւ չլեգիրված պողպատ՝ ձուլակտորներով կամ այլ սկզբնական ձեւերով | 7206 | 627.825 | 743.82 | 0 |
| Կիսապատրաստուկներ երկաթից կամ չլեգիրված պողպատից | 7207 | 1119.536 | 1793.231 | 694.4 |
| Լեգիրված պողպատ ձուլակտորներով կամ կիսապատրաստուկներ | 7224 | 0 | 0 | 7.9 |
| Ընդամենը՝ | | **1747.4** | **2537.1** | **702.4** |

Աղյուսակ 3-Բ

**Տեղեկանք**
**2021-2023թթ. Հայաստանից արտահանված Նախագծում ներառված ապրանքների պետական տուրքի ենթադրյալ չափի մասին (գունավոր մետաղից)**

| Ապրանքի անվանումը | ԱՏԳ ԱԱ ծածկագիր | Չափը տուրքի առակության պարագայում /մլն.դրամ/ | Չափը տուրքի առակության պարագայում /մլն.դրամ/ | Չափը տուրքի առակության պարագայում /մլն.դրամ/ |
|---|---|---|---|---|
| | | 2021 թ. | 2022 թ. | 2023 թ. հունվար-մայիս |
| Զտված պղինձ եւ չմշակված պղնձային և ցինկային | 7403 | 42.0 | 243.9 | 119.4 |
| Ալյումին չմշակված՝ | 7601 | 717.5 | 666.8 | 184.6 |
| Ալյումինի փոշի և թեփուկ | 7603 | 0 | 0 | 0 |
| Ընդամենը՝ | | **759.5** | **910.7** | **304.1** |

Աղյուսակ 4-Ա

**Տեղեկանք***

**2021-2023թթ. Հայաստան ներմուծված այն ապրանքների վերաբերյալ, որոնք ստացվում են Նախագծում ներառված ապրանքների օգտագործման արդյունքում (սև մետաղից) (ներմուծման փոխարինում)**

| Ապրանքի անվանումը | ԱՏԳ ԱԱ ծածկագիր | Քաշը /տոննա/ | Գումար /հազ.ԱՄՆ $/ | Քաշը /տոննա/ | Գումար /հազ.ԱՄՆ $/ | Քաշը /տոննա/ | Գումար /հազ.ԱՄՆ $/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2021 թ. | | 2022 թ. | | 2023 թ. հունվար-մայիս | |
| Գլանվածք սև մետաղից | 7210 | 30800 | 32947 | 37460 | 42786 | 15483 | 16393 |
| Խողովակներ սև մետաղից | 7303 | 685 | 5164 | 779 | 3134 | 388 | 736 |
| Խողովակներ սև մետաղից | 7305 | 2390 | 2181 | 5053 | 6365 | 961 | 1073 |
| Խողովակներ սև մետաղից | 7306 | 24946 | 21751 | 33651 | 30835 | 13270 | 9943 |
| Շինարարական ամրաններ | 7213 | 17400 | 11489 | 24160 | 16225 | 11114 | 6945 |
| Շինարարական ամրաններ | 7214 | 44427 | 28591 | 117690 | 77313 | 58890 | 34486 |
| Երկաթյա պրոֆիլներ | 7216 | 6985 | 6040 | 11387 | 10270 | 4280 | 3487 |
| ***Ընդամենը՝*** | | **96833** | **75216.0** | **192720** | **144142.0** | **88903** | **56670.0** |

Աղյուսակ 4-Բ

**Տեղեկանք***

**2021-2023թթ. Հայաստան ներմուծված այն ապրանքների վերաբերյալ, որոնք ստացվում են Նախագծում ներառված ապրանքների օգտագործման արդյունքում (գունավոր մետաղից) (ներմուծման փոխարինում)**

| Ապրանքի անվանումը | ԱՏԳ ԱԱ ծածկագիր | Քաշը /տոննա/ | Գումար /հազ.ԱՄՆ $/ | Քաշը /տոննա/ | Գումար /հազ.ԱՄՆ $/ | Քաշը /տոննա/ | Գումար /հազ.ԱՄՆ $/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2021 թ. | | 2022 թ. | | 2023 թ. հունվար-մայիս | |
| Ալյումինե պրոֆիլներ | 7604 | 2946 | 13656 | 3877 | 19237 | 1645 | 8778 |
| Ալյումինե լարեր | 7614 | 1090 | 3158 | 248 | 545 | 110 | 329 |
| Ալյոիմինե այլ արտադրանք | 7616 | 2586 | 9855 | 3022 | 13076 | 1012 | 4688 |
| Պղնձյա մալուխներ | 8544 | 4286 | 21837 | 5140 | 22952 | 3221 | 10631 |
| ***Ընդամենը՝*** | | **10908** | **48506.0** | **12287** | **55810.0** | **5988** | **24426.0** |

* - Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալներ (հղում՝ https://www.armstat.am/am/?nid=148)

Աղյուսակ 5

**Տեղեկանք**

**Միջազգային շուկայում Նախագծում ներառված ապրանքների գների մասին**

**(2023թ. հուլիսի 17-ի դրությամբ)**

| **Ապրանք** | **Բորսայական գին ԱՄՆ $/տոննա** |
|---|---|
| Պղինձ | 8650 |
| Ալյումին | 2224.5 |
| Պողպատյա ձուլվածք | 372 |
| Պողպատյա գլանվածք | 825 |